ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՄ ԲԸԱՀ ԱՇՁԲ - 12/3-2.5

ք.Աշտարակ << 11 >> հուլիսի 2012թ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը, գործելով մարզպետարանի կանոնադրությանբ, ի դեմս մարզպետ Ս.Սահակյանի այսուհետև՝ «Պատվիրատու» մի կողմից և « ԵՍ ԵՎ ՆԱ» ՍՊԸ-ն ի դեմս ՍՊԸ-ի տնօրեն Ն. Սահակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կապալառու», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել ՀՀ Արագածոտնի մարզի [illegible]ինպատրուշ համայնքի դպրոցի մասնակի վերանորոգման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 Հավելվածով նախատեսված աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2012թ. հոկտեմբերի 25-ը:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով՝ Հավելված N2: Սույն պայմանագրում նշված՝ Աշխատանքների կատարման ժամկետները կարող են փոփոխվել Կողմերի համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

1.4 Սույն պայմանագրով կողմերի ստանձնաց իրավունքների և պարտավորությունների կատարման պայման է հանդիսանում ՀՀ կառավարության 24.05.2012թ-ի N 711-Ն որոշման ուժի մեջ մտնելը:

2. Կապալառուի միջոցներով աշխատանքները կատարելը

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:
2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժերը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Մինչև Աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը, ցանկացած ժամանակ միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ Կապալառուին վճարելով մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքին համարժեք գինը և հատուցել նրան պատճառված վնասները՝ առնվազն 20 օր առաջ տեղեկացնելով այդ մասին Կապալառուին.

3.1.5 Առանց Աշխատանքի արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքների կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն երկու և ավելի անգամ խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծա-նախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի ապահովման համար սահմանված ժամկետները.

3.1.6 Առանց կատարված աշխատանքի դիմաց վճարելու, պահանջել լուծելու սույն պայմանագիրը, եթե Կապալառուից ստացած ոչ հավաստի տեղեկատվության հետևանքով կնքվել է աշխատանքի կատարման այնպիսի պայմանագիր, որը չունի Պատվիրատուի նկատի ունեցած հատկությունները.

3.1.7 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.8 Աշխատանքի արդյունքում, այն ընդունելուց հետո՝ 3 (երեք) տարվա ընթացքում, Պատվիրատուի կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջել անհատույց վերացնելու այդ թերությունները կամ վերադարձնելու աշխատանքի համար վճարված գնի մասը կամ հատուցելու իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը.

3.1.9 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքների իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.10 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքները կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Մինչև Աշխատանքը Պատվիրատուին հանձնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքի համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված դեպքերի:

3.3.3 Մինչև Աշխատանքը Պատվիրատուին հանձնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ առնվազն 20 օր առաջ այդ մասին տեղեկացնելով Պատվիրատուին:

3.3.4 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը, իսկ չկատարելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ , սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

Հ շինարարություն

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքները դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանած ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

3.4.9 Կապալառուի կողմից սույն պայմանագրով նախատեսված երաշխիքային պայմանների չկատարումը հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

3.4.10 Աշխատանքը հանձնելուց հետո՝ 3 (երեք) տարվա ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում վերացնել այդ թերությունները կամ վերադարձնել աշխատանքի համար սույն պայմանագրով վճարված գնի այն մասը, որը կազմում է թերություններն ամբողջությամբ վերացնելու համար անհրաժեշտ ծախսերի հանրագումարը կամ հատուցել Պատվիրատուի կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը:

4. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

4.1 Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված գրաֆիկով: Աշխատանքների ընդունումն իրականացվում է Կապալառուի կողմից ներկայացվող, սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 4 Հավելվածով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրության, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված այլ փաստաթղթերի հիման վրա:

4.1.1Աշխատանքի կատարման պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

4.2 Պատվիրատուն Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշվետու այլ փաստաթղթերն ստանալու պահից 40 օրվա ընթացքում Կապալառուին է ուղարկում հանձնման-ընդունման՝ ստորագրված արձանագրության մեկ օրինակը կամ դրա պատճառաբանված մերժումը:

4.3 Կապալառուի կողմից ավարտված աշխատանքները կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքները, փուլերը և ծավալները Պատվիրատուի կողմից ընդունված են համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4.4 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.5 Եթե Աշխատանքի ընդունման ժամանակ պարզվի, որ անհրաժեշտ է, ի տարբերություն սկզբնական նախահաշվային փաստաթղթերի, լրամշակել կամ փոփոխել Աշխատանքի առանձին պայմանները, ապա այդ աշխատանքները կատարվում են լրացուցիչ համաձայնագրով՝ նշելով դրանց կատարման ժամկետը և արժեքը:

5. Աշխատանքի գինը և վարձատրությունը

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է *38 899 600* (երեսունութ միլիոն ութ հարյուր ինիսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, որից *6 483 267* (վեց միլիոն չորս հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնի՝ 7 780 000 (յոթ միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար, որը հաշվարկվում է աշխատանքի ընդհանուր գնի մեջ և մարվում մինչև նախատեսված աշխատանքների ավարտը: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանգրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.1.2. Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով ընդունելու դեպքում, սակայն ոչ ուշ քան 25-ը դեկտեմբերի 2012թ., պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.2 Սույն պայմանագրով նախատեսված՝ Աշխատանքի առանձին փուլերի և ծավալների գները ներկայացված են սույն պայամանագրի N 1 հավելվածում: Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի(ընտրված մասնակից և (կամ) պատվիրատու) օգուտները(խնայողություններ) և (կամ) կրած վտասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների ընդունելու դեպքում վճարում է Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն եռամսյակում, որում դրամական միջոցները նախատեսված են:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5%-ի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարներից:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետերով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի միջև սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողություն և /կամ/ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը կատարողը (կապալառուն) ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կատարողին (կապալառուին,) հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի (կապալառուի,) համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը (կապալառուն,) պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.5 Պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի

2) պայմանագրով նախատեսված աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

8.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.7 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է 2(երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, N2, N3, N4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ Արագածոտի մարզպետարան	« ԵՍ ԵՎ ՆԱ» ՍՊԸ
ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ. Պետրոսյան 4 .	ՀՀ Արագածոտնի մարզ,ք.Ապարան.Պ.Սևակի 11
Աշտարակիի ՏԳԲ	< Ակբա կրեդիտ Ագրիկոլբանկ >ՓԲԸ <Արագածոտն> Մ/Ճ
h/h 900441041226 ՀՎՀՀ 03004245	h/h 22004373127000 ՀՎՀՀ 05204081
Ս. Սահակյան	Ն.Սահակյան
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
« 11 » «հուլիս » 2012թ.
Կնքված աշխատանքների կատարման
N **ՀՀԱՄ ԲԸԱՀ ԱՇՁԲ - 12/3-2.5** *ծածկագրով գնման Պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Արագածոտնի մարզի Եղիպատրուշ համայնքի դպրոցի մասնակի վերանորոգման **աշխատանքների կատարման**

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Ծավալը (ՀՀ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը	
			Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ Արագածոտնի մարզի Եղիպատրուշ համայնքի դպրոցի մասնակի վերանորոգման աշխատանքներ	***38 899 600***	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	25.10.12թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտի մարզպետարան

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ. Պետրոսյան 4 .

Աշտարակիի ՏԳԲ

հ/հ 900441041226 ՀՎՀՀ 05004247

Ս. Սահակյան

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

« ԵՍ ԵՎ ՆԱ» ՍՊԸ

ՀՀ Արագածոտնի մարզ,ք.Ապարան.Պ.Սևակի 11

< Ակբա կրեդիտ Ագրիկոլբանկ ՓԲԸ Արագածոտն> Մ/Ճ

հ/հ 22004333112700052040 01 ՀՎՀՀ 05204081

Ն.Սահակյան

Հավելված N 3
« 11 » «հուլիս » 2012թ.
Կնքված աշխատանքների կատարման
N **ՀՀԱՄ ԲԸԱՀ ԱԾՁԲ - 12/3-2.5** *ծածկագրով գնման Պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N ը/կ	Աշխատանքների անվանումը	Ֆինանսավորման գումարը ՀՀ 2012թ պետական բյուջեով նախատեսված միջոցներից ըստ ամիսների՝ ընդ որում								
		մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	ՀՀ Արագածոտնի մարզի Եղիպատրուշ համայնքի դպրոցի մասնակի վերանորոգման աշխատանքներ	0.0	0.0	36 954 620	36 954 620	36 954 620	**38 899 600**	**38 899 600**	**38 899 600**	**38 899 600**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ածողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտի մարզպետարան

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ. Պետրոսյան 4 .

Աշտարակիի ՏԳԲ

հ/հ 900441041226 ՀՎՀՀ 05004247

Ս. Սահակյան

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

« ԵՍ ԵՎ ՆԱ» ՍՊԸ

ՀՀ Արագածոտնի մարզ,ք.Ապարան.Պ.Սևակի 11

< Ակբա կրեդիտ Ագրիկոլբանկ >ՓԲԸ < Արագածոտն> Մ/Ճ

հ/հ 22004333127000 ՎՀՀ 05204081

Ն.Սահակյան

Կ.Տ

Հավելված N 4
« 11 » «հուլիս » 2012թ.
Կնքված աշխատանքների կատարման
N **ՀՀԱՄ ԲԸԱՀ ԱՇՁԲ - 12/3-2.5** *ծածկագրով գնման Պայմանագրի*

Կապալառու

_____
_____
_____
հասցե_____
հհ_____
_____
հվհհ_____

Պատվիրատու

_____
_____
_____
հասցե_____
հհ_____
_____
հվհհ_____

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<_____>> <<_____>> 2012թ.

Պայմանագրի անվանումը՝ ----------

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<_____>> <<_____>> 2012թ.

Պայմանագրի համարը՝_____.

Պատվիրատուն՝ ի դեմս_____և կապալառուն՝ ի դեմս_____, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ <<___>> <<_____>> 2012թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N___ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված նախագծանախահաշվային փաստաթղթերին և օրացուցային գրաֆիկին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կապալառուն <<_____>> <<_____>> 2012թ–ից <<_____>> <<_____>> 2012թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակա-ցույցի)
Ընդամենը	----------	----------		---------

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
(ստորագրություն)
ազգանուն _____

Կ Տ

Աշխատանքը ընդունեց

_____
(ստորագրություն)
ազգանուն _____

Կ Տ

Հավելված N 1
« 11 » «հուլիս » 2012թ.
Կնքված աշխատանքների կատարման
N **ՀՀԱՄ ԲԸԱՀ ԱՇՁԲ - 12/3-2.5** *ծածկագրով գնման Պայմանագրի*

Ծավալաթերթ-նախահաշիվ

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ

ՀՀ Արագածոտնի մարզի Եղիպատրուշ համայնքի դպրոցի մասնակի վերանորոգման

Հ/Հ	Աշխատանքի նկարագիր	Չ/մ	ՔԱ-ՆԱԿ	Միավորի արժեքը	Ընդա-մենը
1	2	3	4	5	6
	1,Քանդման աշխատանքներ				
1	Փայտե պատուհանների քանդում /պատուհանագոգերի հետ միասին/	100 մ^2	2.3472	150.0	352.080
2	Փայտե դռների քանդում	100 մ^2	0.7031	150.0	105.465
3	Փայտե վիտրաժի քանդում	100 մ^2	0.171	150.0	25.650
4	Կերամիկական սալիկ.հատակ.քանդում	100 մ^2	0.107	100.0	10.700
5	Ց/ավազային հարթեցուցիչ շերտի քանդում	100 մ^2	9.988	50	499.400
6	Մանրատախտակե հատակների քանդում	100 մ^2	5.02	50.0	251.000
7	Բացվածքի քանդում	մ^3	0.11	10.0	1.100
8	Առաստաղի գաջի սավաղի քանդում	100 մ^2	2.77	50.0	138.500
9	Պատի և առաստաղի մաքրում հին ներկից /յուղաներկ և տոսնձաներկ/	100 մ^2	0.35	20.0	7.000
10	Գոյ. ունեցող միջնորմների քանդում	100 մ^2	0.76	50.0	38.000
11	Լինոլիումե հատակների քանդում	մ^2	112	0.5	56.000
12	Պող.խողովակների ապամոնտժում/ջեռուցում/	մ	164	0.3	49.200
13	Ջեռուցման մարտկոցների/կոնվեկտոր/ ապամոնտաժում	հատ	52	2.0	104.000
14	Պող.խողովակների ապամոնտժում/ջրագիծ/	մ	26	0.3	7.800
15	Օդափոխության համակարգի ապամոնտաժում մինրև 2070 մմ	100 մ^2	0.072	100.0	7.200
16	Շին.աղբի բարձում ինքնաթին.	տն	6.5	5.0	32.500
17	Շին.աղբի Տեղափոխում 3կմ	տն	6.5	5.0	32.500
18	Շին.աղբի բարձում ինքնաթին.	տն	1.8	5.0	9.000
19	Շին.աղբի Տեղափոխում 3կմ	տն	1.8	5.0	9.000
20	Շին.աղբի բարձում ինքնաթին.	տն	3	5.0	15.000
21	Շին.աղբի Տեղափոխում 3կմ	տն	3	5.0	15.000
22	Շին.աղբի բարձում ինքնաթին.	տն	21	5.0	105.000
23	Շին.աղբի Տեղափոխում 3կմ	տն	21	5.0	105.000
	2,Բացվածքներ /առաջին հարկ/				
1	Մետաղապլաստե դռան տեղադրում 60 մմ հաստ (օտարերկրյա. պրոֆիլ, սպիտակ գույն)	մ^2	66.68	40.0	2667.200
2	Ալյումինե դռան տեղադրում 60 մմ հաստ ջերմակամուրջով 4+4 (օտարերկրյա. պրոֆիլ, սպիտակ գույն)	մ^2	3.6	50.0	180.000
3	Մետաղապլաստե պատուհանների տեղադ-	մ^2	102.27	30.0	3068.100

	րում /բացվող/ (օտարերկրյա.պրոֆիլ,սպիտակ) 60 մմ հաստ4+4 մմ				
4	Մետաղապլաստե պատուհանների տեղադ-րում /չբացվող/ (թուրք.պրոֆիլ,սպիտակ) 60 մմ հաստ4+4 մմ	$մ^2$	132.45	25.0	3311.250
5	Մետաղապլաստե պատուհանագոգերի տեղադրում	$մ^2$	26.875	5.0	134.375
6	Մետաղապլաստե պատուհանագոգերի արժեք /25սմ լայնութ./	գմ	107.5	2.0	215.000
7	Արտաքին պատուհանագոգերի արցուն քաթափրի տակ g/ավազային սվաղ	100մ	1.368	100.0	136.800
8	Արցունքաթափերի կառուցում g/թիթեղից 0,55 մմ	$100մ^2$	0.274	200.0	54.800
9	Ջագարների փոխում	հատ	3	5.0	15.000
10	Ջյան արգելափակիչների տեղադրում	$100մ^2$	0.405	100.0	40.500
11	Ինքնաշաղափող պտուտակ 80 մմ	հատ	300.0	0.02	6.0
12	Ինքնաշաղափող պտուտակ 40 մմ	հատ	300.0	0.02	4.5
	3,Միջնորմներ /առաջին հարկ/				
1	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	0.4	5.00	2.0
2	Միաձույլ բետոնե հիմքեր միջնորմների տակ	$մ^3$	0.3	40.00	13.6
	Վ - 12.5 բետոնից				
3	Միջնորմների կառուցում 10 սմ հաստ.	$մ^3$	2.3	20.00	45.6
	պեմզաբլոկից				
4	Միջնորմների կառուցում 20 սմ հաստ.	$մ^3$	2.7	20.00	54.0
	պեմզաբլոկից				
5	Միջնորմների ամրանավորում Ա-1	տն	0.1	500.00	33.6
6	Միջնորմների սվաղում գաջի շաղախով	$100 մ^2$	0.7	200.00	146.0
	բարելաված որակի				
7	Ե/բ միաձույլ բարավորի կառուցում	$մ^3$	1.2	60.00	72.0
	Վ-15 բետոնից				
8	Ամրան Ա-1	տն	0.0	400.00	10.8
9	Ամրան Ա-3	տն	0.1	400.00	42.8
10	Ե/բ միաձույլ երիզվածքի կառուցում	$մ^3$	3.5	60.00	212.4
	Վ-15 բետոնից				
11	Ամրան Ա-1	տն	0.1	400.00	30.2
12	Ամրան Ա-3	տն	0.3	400.00	134.5
	4,Հատակներ				
1	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ	$100 մ^2$	10.0	200.00	1999.6
	30մմ հաստ.				
2	Լամինատե -8 մմ հատակների կառուցում	$մ^2$	543.6	5.00	2718.0
	սպունգով ,շրիշակով				
3	Հատակների կառուցում սալիկներից	$100 մ^2$	3.8	600.00	2288.4
	/Մամլոգրանիտե սալ 40*40 իրանական				
4	Մամլոգրանիտե շրիշակների	$100մ^2$	0.6	600.00	331.2
	կառուցում H=15սմ				
5	Խճանկարային հատակների կառուցում	$մ^2$	74.8	3.00	224.4
	5,Հարդարման աշխատանքներ /դասասենյակներ/				
1	Պատերի սվաղում գաջի շաղախով	$100 մ^2$	0.2	250.00	54.0

	բարելավված որակի				
2	Շեպերի սվաղում գաջի շաղախով	100 մ^2	0.9	300.00	262.5
	/դռներ նպատուհաններ/				
3	Պատերի յուղաներկում	100մ^2	5.4	250.00	1340.0
4	Շեպերի յուղաներկում	100մ^2	0.3	250.00	85.5
5	Պատի գաջի սվաղի նորոգում	100 մ^2	4.4	200.00	888.0
	բարելավված որակի մինչև 10 մ քառ				
6	Պատերի ներկում լատեքսով	100 մ^2	5.2	250.00	1295.3
	բարելավված որակի/super -L ՇԵՆ/				
7	Առաստաղի սվաղում գաջի շաղախով	100 մ^2	2.8	250.00	704.0
	բարելավված որակի				
8	Առաստաղի գաջի սվաղի նորոգում	100 մ^2	1.5	200.00	296.0
	բարելավված որակի մինչև 10 մ քառ				
9	Առաստաղների լատեքսով	100 մ^2	5.9	250.00	1474.8
	բարելավված որակի/super -L ՇԵՆ/				
10	Շեպերի սվաղում գաջի շաղախով	100 մ^2	0.3	300.00	102.6
	Ներքին ջրամատակարարում				
1	Մետաղապլաստե խողով. տեղադ .d=16մմ	մ	27.0	1.00	27.0
2	Մետաղապլաստե խողով. տեղադ .d=25մմ	մ	20.0	1.00	20.0
3	Լվացարանի ծորակի տեղադրում d=15մմ	հատ	3.0	1.00	3.0
4	Մետաղապլաստ անցում 25/ 1	հատ	1.0	1.00	1.0
5	ձևավոր մաս d=16,25մմ	հատ	4.0	1.00	4.0
6	Մետաղապլաստ անցում 16/ 1/2	հատ	3.0	1.00	3.0
7	Եռաբաշխիչ 16*16*16	հատ	2.0	1.00	2.0
8	Ճկուն խողովակ սան սարքերի միաց.համար	մ	1.5	1.00	1.5
9	Պլաստմասե շրջակապ 20 / 16մմ	հատ	33.0	0.50	16.5
	Կոյուղագծի ներքին տեղամաս				
1	Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում	մ	14.0	1.0	14.0
	d=50մմ				
2	Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում	մ	42.0	2.0	84.0
	d=100մմ,3,2 մմ				
3	Լվացարանի տեղադրում/ոտնակով/	կ-տ	3.0	20.0	60.0
4	Պոլիվ անցում 100/50 մմ/արժեք/	հատ	1.0	1.0	1.0
5	Պոլիվ ստուգիչ,մաքրիչ d=50մմ/արժեք/	հատ	2.0	1.0	2.0
6	Քառաբաշխիչ 50	հատ	1.0	1.0	1.0
7	Եռաբաշխիչ 50*50*50	հատ	2.0	1.0	2.0
8	Արտուղղում 90 ° d=100մմ	հատ	1.0	1.0	1.0
9	Արտուղղում 90 ° d=50մմ	հատ	3.0	1.0	3.0
10	Ճկախողովակ սիֆոնով d=50 մմ	հատ	3.0	2.0	6.0
11	Անցքերի բացում (միջհարկային ծածկ)	100հտ	0.03	100.0	3.0
12	Պլաստմասե շրջակապ 50,100 մմ	հատ	40.0	0.5	20.0
13	Ռետինե միջադիր	հատ	3.0	1.0	3.0
14	Կոյուղու թուջե խողովակի ապամոնտաժում	100մ	0.1	100.0	5.0
	Լուսավորություն				
1	Լուսարձակ 300 վտ , պաշտպանիչ	հատ	8.0	3.0	24.0
	մետաղական ցանցով				
2	Լյումենեսցենտային լուսատուի տեղադրում	հատ	106.0	4.0	424.0
	ԼՊՕ - 2*36				

3	Առաստաղային լուսատուի տեղադրում	հատ	14.0	4.0	56.0
	շիկացման լամպով ՆՊՕ 21-200				
4	Առաստաղային լուսատուի տեղադրում	հատ	45.0	4.0	180.0
	շիկացման լամպով ՆՊՕ 21-100				
5	Առաստաղային լուսատուի տեղադրում	հատ	16.0	4.0	64.0
	շիկացման լամպով ՆՊՕ 21-60				
6	Պատի լուսատուի տեղադրում	հատ	6.0	4.0	24.0
	շիկացման լամպով ՆԲՕ 21-60				
7	Երկբևեռ վարդակ ՍԻ~220Վ,Iմոնտ=6Ա	հատ	35.0	1.0	35.0
8	էլեկտրական անջատիչ միաստեղ միաբևեռ	հատ	19.0	1.0	19.0
9	էլեկտրական անջատիչ երկստեղ միաբևեռ	հատ	30.0	1.0	30.0
10	Տուփ բաժանարար	100հտ	1.0	100.0	100.0
11	Տուփ վարդակների և անջատիչների	100հտ	0.840	100.0	84.0
12	Տուփ բաժանարար արտաքին տողադրման	100հտ	0.07	100.0	7.0
13	Հաղորդալարի անցկացում ՊՊՎ 2*2.5մմ²	100 մ	13.65	40.0	546.0
14	Հաղորդալարի անցկացում ՊՊՎ 3*2.5մմ²	100 մ	1.5	50.0	75.0
15	Մալուխի տեղադրում 2*2.5մմ² ՎՎԳ	100մ	0.35	50.0	17.5
16	Մալուխի տեղադրում 3*2.5 մմ² ՎՎԳ	100մ	0.85	60.0	51.0
17	Պլաստմասե սակառների տեղադրում 20*20.	100 մ	0.34	50.0	17.0
18	Պլաստմասե սակառների տեղադրում 20*30.	100 մ	0.02	50.0	1.0
19	Ակոսների փորում 20*15	100մ	13.00	10.0	130.0
20	Ակոսագծերի գաջի սավաղում	100մ²	0.260	200.0	52.0
21	Գոյություն ունեցող լուսատուների	հատ	85.0	1.0	85.0
	ապամոնտաժում				
22	Խմբային վահան /պլաստմասե արկղ/4տեղ	հտ	1.0	5.0	5.0
23	Բեռի անջատիչ,երկբևեռ 10 Ա	հտ	4.0	5.0	20.0
	Լուսավորության խմբային վահանակ 12 խմբով, կազմված՝				
1	Խմբային վահան /պլաստմասե արկղ/12 տեղանոց	հտ	1.0	10.0	10.0
2	Եռաբևեռ ավտոմատ անջատիչ 40Ա/ֆրանս/	հտ	1.0	5.0	5.0
3	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 25 Ա/ֆրանս/	հտ	2.0	3.0	6.0
4	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 16 Ա/ֆրանս/	հտ	4.0	2.0	8.0
5	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 10 Ա/ֆրանս/	հտ	1.0	2.0	2.0
	Լուսավորության խմբային վահանակ 12 խմբով, կազմված՝				
1	Խմբային վահան /պլաստմասե արկղ/12 տեղանոց	հտ	1.0	10.0	10.0
2	Եռաբևեռ ավտոմատ անջատիչ 32Ա/ֆրանս/	հտ	1.0	5.0	5.0
3	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 25 Ա/ֆրանս/	հտ	2.0	3.0	6.0
4	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 16 Ա/ֆրանս/	հտ	4.0	2.0	8.0
5	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 10 Ա/ֆրանս/	հտ	1.0	2.0	2.0
	Ջեռուցման սարքերի էլեկտրամատակարարում				
1	Խմբային վահան /պլաստմասե արկղ/18 տեղանոց	հտ	1.0	20.0	20.0
2	Եռաբևեռ ավտոմատ անջատիչ 63Ա/ֆրանս/	հտ	1.0	10.0	10.0
3	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 25 Ա/ֆրանս/	հտ	5.0	4.0	20.0
4	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 16 Ա/ֆրանս/	հտ	5.0	3.0	15.0
5	Խմբային վահան /պլաստմասե արկղ/18 տեղան	հտ	1.0	20.0	20.0

6	Եռաբևեռ ավտոմատ անջատիչ 50Ա/ֆրանս/	հտ	1.0	20.0	20.0
7	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 25 Ա/ֆրանս/	հտ	3.0	4.0	12.0
8	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 16 Ա/ֆրանս/	հտ	5.0	3.0	15.0
9	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 10 Ա/ֆրանս/	հտ	1.0	2.0	2.0
10	Երկբևեռ վարդակ ՍԻ~220Վ,Iօñò=10Ա	հատ	42.0	2.0	84.0
11	Տուփ վարդակների	100հտ	0.4	100.0	42.0
12	Տուփ բաժանարար	100հտ	0.2	100.0	21.0
13	Հաղորդալարի անցկացում ՊՊՎ 2*2.5մմ²	100 մ	2.2	40.0	88.0
14	Հաղորդալարի անցկացում ՊՊՎ 2*4մմ²	100 մ	4.2	60.0	252.0
15	Հաղորդալարի անցկացում ՊՊՎ 2*6մմ²	100 մ	2.0	60.0	120.0
16	Հաղորդալարի անցկացում ՊՊՎ 2*10մմ²	100 մ	1.75	100.0	175.0
17	Ակոսների փորում 20*15	100մ	8.5	10.0	85.0
18	Ակոսագծերի գաջի սավաղում	100մ²	0.17	200.0	34.0
	Ուժային սարքեր				
1	Մալուխի տեղադրում 4*4 մմ² ՎՎԳ	100մ	0.8	100.0	75.0
2	Մալուխի տեղադրում 4*6 մմ² ՎՎԳ	100մ	0.40	120.0	48.0
3	Մալուխի տեղադրում 4*10մմ² ՎՎԳ	100մ	0.35	200.0	70.0
4	Պլաստմասե սակառների տեղադրում 20*20.	100 մ	0.080	50.0	4.0
5	Պլաստմասե սակառների տեղադրում 20*40.	100 մ	0.36	50.0	18.0
6	Մալուխի ծայրապնակ 4 մմ	հատ	16.0	2.0	32.0
7	Մալուխի ծայրապնակ 6 մմ	հատ	8.0	1.3	10.4
8	Մալուխի ծայրապնակ 10 մմ	հատ	8.0	1.5	12.0
	Արտաքին էլեկտրամատակարարում				
1	Մալուխի անցկացում 4*70մմ² ԱՎՎԳ	100մ	0.90	450.0	405.0
2	Մալուխի ծայրապնակ 10 մմ	հատ	8.0	1.0	8.0
3	Պողպատե ճոպան 6.2 մմ	մ	65.0	1.0	65.0
4	Հաղորդալարի անցկացում ԱՍ 35/6.2	կմ	0.015	300.0	4.5
5	Հաղորդալարի արժեքը	մ	15.0	0.6	9.0
6	Պլաստմասե սակառների տեղադրում 40*40.	100 մ	0.14	100.0	14.0
	Ամբողջը I մասի				***30872.70***
	Շահույթ - 5%				***1543.635***
	Ընդամենը				***32416.34***
	ԱԱՀ -20%				***6483.267***
	Ամբողջը				***38899.600***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտի մարզպետարան

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ. Պետրոսյան 4 .

Աշտարակիի ՏԳԲ

h/h 900441041226

Ս. Սահակյան

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

« ԵՍ ԵՎ ՆԱ» ՍՊԸ

ՀՀ Արագածոտնի մարզ,ք.Ապարան.Պ.Սևակի 11

< Ակբա կրեդիտ Ագրիկոլբանկ >ՓԲԸ < Արագածոտն> Մ/Ճ

h/h 22004233127000 05204081

Ն.Սահակյան